

5.7. Արտակարգ իրավիճակները 2003թ. I կիսամյակում

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության ամփոփ տեղեկատվության, 2003թ. I կիսամյակում հանրապետության տարածքում գրանցվել է 721 արտակարգ իրավիճակի դեպք: Աղետների հետևանքով տուժել է 615 մարդ, նրանցից 50-ը զոհվել են, 505-ը՝ վիրավորվել, 60-ը՝ ժամանակավորապես տարահանվել:

Գրանցված արտակարգ իրավիճակների դեպքերի 35.8%-ը բաժին է ընկել տարերային աղետներին, որոնց հետևանքով տուժվել է 70 մարդ, նրանցից 1-ը զոհվել է, 9-ը՝ վիրավորվել, 60-ը՝ ժամանակավորապես տարահանվել:

Տարերային աղետների քանակը և տուժածների թվաքանակը

	Գրանցված դեպքերի քանակը, ընդամենը	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ նրանցից			
		ընդամենը	զոհվել են	վիրավորվել են	ժամանակավորապես տարահանվել են
Տարերային աղետներ, ընդամենը	258	70	1	9	60
այդ թվում					
ուժեղ քամի, փոթորիկ, մրրիկ, պտտահողմ, փոշեփոթորիկ	9	-	-	-	-
մառախուղ					
ամպրոպ, կայծակ	1	1	1	-	-
կարկուտ	10	-	-	-	-
տեղատարափ անձրև	5	-	-	-	-
տողանք	12	-	-	-	-
սելավ	15	-	-	-	-
ծյան առատ տեղումներ, բուք, ձյունահողմ	3	-	-	-	-
ձնահյուսք	2	-	-	-	-
անտառային հրդեհ	4	-	-	-	-
ցրտահարություն վեգետացիոն շրջանում	2	-	-	-	-
գետերի վարարումներ և ջրհեղեղ	26	60	-	-	60
փլվածք	3	-	-	-	-
քարաթափվածք	10	-	-	-	-
համաճարակ բնակչության շրջանում	3	9	-	9	-
երկրաշարժ	7	-	-	-	-
հացահատիկի դաշտերի և տարածքների հրդեհներ	29	-	-	-	-
ջրի մակարդակի բարձրացում	41	-	-	-	-
ջրի մակարդակի իջեցում	76	-	-	-	-

Արտակարգ իրավիճակների դեպքերի 64.2%-ը բաժին է ընկել տեխնածին աղետներին, որոնց հետևանքով տուժել է 545 մարդ (49 զոհ, 496 վիրավոր):

Տեխնածին աղետների քանակը և տուժածների թվաքանակը

	Գրանցված աղետների քանակը	Պատճառած վնասը, հազ. դրամ	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ նրանցից		
			ընդամենը	զոհվել են	վիրավորվել են
Տեխնածին աղետներ, ընդամենը	463	68	545	49	496
այդ թվում					
վթարներ (աղետներ) ավտոճանապարհներին, որոնք ուղեկցվում են 5 և ավելի մարդկանց զոհերով կամ մարդիկներում երթևեկության տևական խաթարումով	1	-	6	6	-
վթարներ մայրուղային խողովակաշարերում	2	-	-	-	-

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Գրանցված աղետների քանակը	Պատճառած վնասը, հազ. դրամ	Տուժած մարդկանց թվաքանակը, մարդ		
			ընդամենը	նրանցից զոհվել են	վիրավորվել են
հրդեհ (պայթյուն) արդյունաբերական օբյեկտներում	35	-	1	1	-
հրդեհ (պայթյուն) տրանսպորտում	31	-	1	-	1
հրդեհ (պայթյուն) հանքահորերում, ստորգետնյա անցումներում և մետրոպոլիտենում	1	-	-	-	-
հրդեհ (պայթյուն) սոցիալ-կենցաղային, մշակութային օբյեկտներում	53	-	3	1	2
տրանսպորտային ուղիների էլեմենտների փլուզում	4	-	-	-	-
արտադրական շենքերի և շինությունների փլուզում	1	-	-	-	-
բնակելի, սոցիալ-կենցաղային նշանակության շենքերի և շինությունների փլուզում	17	-	7	3	4
վթար էլեկտրաէներգետիկ համակարգերում, որն ուղեկցվում է հիմնական սպառողների և ընդարձակ տարածքների 6 ժամից ավելի էլեկտրաօգտագործումից զրկմամբ	1	-	-	-	-
հրդեհ (պայթյուն) բնակելի շենքերում և շինություններում	215	48	11	4	7
տեխնածին այլ աղետներ	10	-	6	1	5
այլ վթարային իրավիճակներ, որոնք ուղեկցվում են ճառագայթման աղբյուրների, պայթուցիկ սարքերի և այլնի հայտնաբերումով	8	-	-	-	-
դժբախտ պատահարներ	31	-	38	20	18
այլ վթարներ (աղետներ) ավտոճանապարհներին	15	-	57	11	46
այլ աղետներ	38	20	415	2	413

2003թ. I կիսամյակի ընթացքում արտակարգ իրավիճակների վերացման աշխատանքների իրականացման նպատակով պատրաստվել և ուսուցանվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի 801 ղեկավար և մասնագետ: